# «ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Օ Ր Ե Ն Ք Ը**

**«ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻ**

**Հոդված 1.** «Երեխայի իրավունքների մասին» 1996 թվականի մայիսի 29-ի ՀՕ-59 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր երկրորդ մասով.

«երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողով ստեղծելու կարգը, հանձնաժողովի կանոնադրությունը և անհատական կազմը հաստատում է Հայաստանի Հանրապետության վարչապետը:»:

**Հոդված 2.** Օրենքի 12-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր երրորդ մասով.

«Հայաստանի Հանրապետության կառավարությանը հաստատում է երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող շուրջօրյա հաստատություններում խնամվող երեխաների վերադարձն ընտանիքներ կազմակերպման և ընտանիքներից բաժանման ռիկսի կանխարգելման ծրագրերը:»:

**Հոդված 3.** Օրենքի 13-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր երրորդ մասով՝

Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների տիպերի ցանկը, դրանցում երեխաների տեղավորման չափանիշները հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

**Հոդված 4.** Օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր երկրորդ նախադասությամբ՝

«Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող երեխաների որդեգրման համակարգի բարեփոխման, ինչպես նաև փաստահավաք գործունեության իրականացման նպատակով անհրաժեշտ իրավական հիմքերի ապահովման համար աշխատանքային խումբ ստեղծելու կարգը, դրա կազմը, գործունեության և գործառույթների իրականացման կարգը հաստատում է **Հայաստանի Հանրապետության վարչապետը:»:**

**Հոդված 5.** Օրենքի 25-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հինգերորդ մասով.

«Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների՝ այլընտրանքային խնամքի տրամադրման նպատակով ուղղորդման կարգը և չափորոշիչները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»:

**Հոդված 6.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: